



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2022 թվականի N 1240 -Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի  
N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համա-  
պատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *n p n 2 ու մ է.*

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 6 աղյուսակում  
կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021  
թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի  
պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն  
որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝  
համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 6 աղյուսակի,  
Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի

23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման N 5 հավելվածի 5-րդ աղյուսակի 1.1-ին ենթահոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ և մետաղական արգելափակոցների պահպանում»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան